ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Բերնար»ՓԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	«ԲԵՐՆԱՐ» ՓԲԸ	«ԲԵՐՆԱՐ» ՓԲԸ	«ԲԵՐՆԱՐ» ՓԲԸ	«ԲԵՐՆԱՐ» ՓԲԸ	Վերնաշապիկ կարճաթև: կապտասև Midnight Navy #0a031d Color Palette կամ Hex Code #191970 գույնի կտորից, 67%, ±3% բամբակ և 33%, ±3% պոլիէսթեր, քաշը 1մ2 180 գ, ±3%, ուսադիրներով և ծալովի օձիքով: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի մեջ դրվող կամ վրան դրվող՝ առանձգական ժապավենով է համաձայն

					պատվիրատու ստորաբաժանման պահանջներին: Առաջամասերին մշակված են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ-կոճակով և վերևի մասում ունեն 3 սմ բացվածք՝ տեսախցիկի ու ռադիոկայանի խոսափողի համար: Ձախ կողային կարի վրա կա բացվածք, ինչպես նաև ձախ գրպանի մեջ՝ ալեհավաքի լարի անցկացման համար: Ուսամասից մինչև թևքի տակ կարվում է կրկնակի կտոր: Վերնաշապիկի առաջամասերին մշակվում է վրադիր, կրկնակի կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Առաջամասը ունի երկու արտաքին կարեր, իսկ թիկունքը ամբողջական է և երկայնքով ունի երեք արտաքին կարեր: Թևքերի երկարությունը մինչև արմունկ՝ մշակված թեզանիքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն

					ժապավենով ամրանում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13X2,5սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ բառերը: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Վերնաշապիկը ունի 2-3 օդանցքեր՝ շնչողունակությունն առավելագույնին հասցնելու համար: Ուսադիրները կարվում են նույն կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճակով, իսկ ուսերի մասում կարված են: Փաթեթավորումը՝ Տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Վերնաշապիկը պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և լվանալու պայմանները: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի

					գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, ինչպես նաև օգտագործված բոլոր նյութերի մասին տեղեկատվություն, որը տրվում է արտադրողի կողմից։ Պատվիրատուն տրամադրում է հաստատված և կնքված նմուշ։ Նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի հետ, որը հաստատվում կամ մերժվում է վերջինիս կողմից։ Ապրանքատեսակները պետք է լինեն նոր և չօգտագործված։ Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում։ Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Բերնար» ՓԲԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					